Տոկոսադրույքի հաշվարկման կարգը

Վարկի օգտագործման համար վարկառուն բանկին վճարում է տոկոս, որի հաշվարկը կատարվում է վարկի մնացորդի նկատմամբ, վարկի տրամադրման օրվանից՝ փաստացի օգտագործված օրացուցային օրերի համար՝ տարին ընդունելով 365 օր: Առանձին ծրագրերի շրջանակներում վարկավորման դեպքում տարին կարող է ընդունվել 360 օր:

- Տոկոսագումարները վճարվում են վարկային պայմանագրում նշված ժամկետներում:
- Տոկոսների վճարման պարբերականությունը սահմանավում է վարկային պայմանագրի կամ մարման գրաֆիկի համաձայն:
- Եթե վարկի կամ հաշվարկված տոկոսների մարման օրը համընկնում է հանգստյան օրերի հետ, վճարումը կատարվում է հաջորդող աշխատանքային օրերին՝ հանգստյան օրերի համար չհաշվարկելով տույժ:
- Հաշվարկված տոկոսագումարները ենթակա են վճարման բացառապես ՀՀ դրամով՝ անկախ վարկի արժույթից:

Վարկային պարտավորության մարումները

- Վարկերը մարվում են այն ժամկետներում, որոնք նշված են վարկային պայմանագրում,
- Վարկերը մարվում են այն արժույթով, որով ձևակերպվել են,
- Արտարժույթային վարկերի դեպքում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա,
- Արտարժույթի փոխարժեքի փոփոխության դեպքում արտարժույթով տրամադրած վարկերի գծով փոխարժեքի փոփոխության ազդեցության ռիսկը կրում է վարկառուն:

Վարկային պարտավորության մարումները կատարվում են հաշվապահության կողմից հետևյալ հերթականությամբ.

- Դատական ծախսերի գումարը (առկայության դեպքում),
- Գրավի իրացման ծախսերը (առկայության դեպքում),
- Հաշվարկված տույժերը,
- Հաշվարկված տոկոսները,
- Վարկի մայր գումարը:

Վարկային պարտավորությունների ժամկետից շուտ կատարման համար տույժ չի գանձվում՝ բացառությամբ հիփոթեքային վարկերի: Հիփոթեքային վարկերը ժամկետից շուտ մարելու համար գանձվում է տույժ՝ վաղաժամկետ մարվող վարկի գումարի տարեկան 0.5%-ի չափով:

Ուշադրություն.
Ձեր պարտավորությունները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու դեպքում Ձեր պարտքի վերաբերյալ տեղեկությունները կուղարկվեն վարկային ռեգիստր և վարկային բյուրո (աքռա):

Ուշադրություն.
Վատ վարկային պատմություն ունենալը Ձեզ համար հետագայում կարող է խոչընդոտ հանդիսանալ այլ վարկեր ստանալիս:

Ուշադրություն.
Ձեր կողմից գրավադրված գույքը (տունը, մեքենան կամ այլ) կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, եթե դուք ժամանակին չկատարեք Ձեր վարկային պարտավորությունները: